



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՄԳ ՉՈՐԵՔՉԱԲԹԻ ԿՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ

ՔՐԻՍՏՈՍԸ ՍԻՐՈՂՆԵՐՈՒ ԽՄԲԱԿԻՆ ՊԱՏԿԱՆԻՆՔ

ԹԵԼԱԴՐԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ

Համաձայն մեր եկեղեցւոյ տօնակարգին, Աւագ Չորեքշաբթին նուիրուած է Մարիամի կողմէ անուշաբոյր իւղով Քրիստոսի օծման եւ քահանաներուն կողմէ Յիսուսի դէմ դաւադրութեան յիշատակին:

Այս առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան նախագահեց Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Աւագ Չորեքշաբթի արարողութեան, որ համախմբած էր մեր Թեմի հոգեւորականներն ու հաւատացեալ ժողովուրդը, եւ այս առիթով տուաւ իր պատգամը:

Առաջնորդ Սրբազանը նշեց, որ Շարականագիրը լաւագոյն ձեւով կը բնութագրէ օրուան խորհուրդը, թէ արծաթասեր Յուդան ինչպէս պիտի մատներ Վարդապետը:

«Յիսուսի Քրիստոսի երկրաւոր կեանքի վերջին շաբաթը խորհրդանշող այս օրերուն, ահա միասնաբար համախմբուած կ'աղօթենք, եւ կ'անդրադառնանք Քրիստոսի չարչարանքները կանխող դէպքերուն ու դրուագներուն», ըսաւ Առաջնորդ Սրբազանը. Երուսաղէմի մէջ, քահանաները ատելութեամբ լեցուն մատնիչ Յուդային հետ կը դաւէին Յիսուսի դէմ, մինչ անդին, Բեթանիոյ մէջ, Քրիստոսը սիրողները, սիրոյ մթնոլորտի մէջ Յիսուսի շուրջ համախմբուած էին բորոտ Սիմոնի տունը եւ միասին կ'ընթրէին, եւ ուր Մարիամ Յիսուսի գլուխն ու ոտքերը թանկագին իւղով կ'օծէր, որպէս խորհրդանշի Քրիստոսի թաղման :

Ահա երկու մարդկային խումբեր՝ Քրիստոսը սիրողներու եւ Քրիստոսը ատողներու: Մենք արդեօք ո՞ր խումբին կը պատկանինք:

Մենք մեր անձերը քննելով, գիտենք թէ ո՞ր խմբակին կը պատկանինք: Ահա այսօր անգամ մը եւս ապաշխարութեան առիթ կ'ընծայուի մեզի, մեր թերութիւններէն, ծուլութենէն, ամբարտաւանութիւններէն ձերբազատելու եւ Քրիստոսի սիրողներու խմբակին մաս կազմելու, շարունակեց Առաջնորդ Սրբազանը եւ եզրափակեց ըսելով. «Տայ Աստուած, որ Քրիստոսի սիրոյ հոգին մեզի առաջնորդ ըլլայ այս Շաբաթ եւ ընդմիշտ, ամէն»:

COMMEMORATION OF HOLY WEDNESDAY

LET US BELONG TO THOSE WHO LOVE JESUS

DECLARED THE PRELATE

In accordance with our church calendar, on Holy Wednesday we commemorate the betrayal of Jesus by Judas and the anointing of His feet.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over Holy Wednesday services at St. Mary's Church in Glendale, with the participation of Prelacy clergy.

In his message the Prelate stated that in Jerusalem there were those who hated Jesus and conspired with Judas against Him, while in Bethany those who loved Jesus gathered around Him and enjoyed dinner during which His head and feet were anointed which symbolized His burial. The people of the day were divided into two groups, those who loved Him and those who despised Him, said the Prelate, and posed the question of which group do we belong to. The Prelate continued stressing that today we are granted another opportunity to repent, to free ourselves from sin, and to belong to the group that loves Jesus, and concluded by beseeching God to guide our path with His Holy Spirit during Holy Week and always.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to info@westernprelacy.org, Visit our Website www.westernprelacy.org Copyright . 2007 All rights reserved.